ՉԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎՈՒՄ ԵՆ
ԵՐԵՎԱՆԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Խաչքարը դեռ ամրակապված է կախոցների մեջ

Օդանավը տաճարամուտքում սկսում է մոտենալ

ԿԱՏԱՐՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԻ ՕԾՈՒՄԸ

Նոյեմբերի 9-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Երևանի Հարավ-արևմտյան թաղամասի նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցու խաչերի օծման արարողությունը:

Եկեղեցու շինարարական աշխատանքներն սկսվել են դեռևս 2001թվականից: Նորակառույց եկեղեցու ճարտարապետն է լուսահոգի Բաղդիկ Արզումանյանը: Այն կառուցվում է ազգային բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի բարերարությամբ:

«Ուրախ լեր» շարականի երգեցողության ներքո եկեղեցականների թափորն ուղղվեց դեպի նորակառույց եկեղեցու խաչերը: Արարողության ընթացքում սաղմոսերգության ներքո նախ ջրով և գինով լվացվեցին խաչերը, ապա օծվեցին Սրբալույս Մյուռոնով՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետի և Սրբազան Հայրերի: «Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք» շարականի հնչյունների ներքո հոգևորականները և ժողովրդի խուռներամ բազմությունը մոտեցան ու համբուրեցին նորաօծ Ս. խաչերը, որից հետո զույգ խաչերը տեղադրվեցին եկեղեցու և զանգակատան գմբեթներին:

«Այդ խաչերը պիտի բարձրանան ու զետեղվեն՝ որպես փրկության նշան և խորհուրդ ազգիս հայոց, որպես հաղթության նշան, որով դարերի ընթացքում կարողացել ենք մեր կյանքը հաղթանակների առաջնորդել: Մենք հավատում ենք, սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, որ մեր Տիրոջ նվիրագործված խաչը պիտի ցրի մեզն ու մառախուղը մեր կյանքի, պիտի ցրի անորոշությունը մեր աշխարհից, և մենք, սիրով միաբան, խաչին ապավինած, խաչի օրհնության և զորության ներքո պիտի լծվենք մեր հայրենիքի շինության և մեր Եկեղեցու պայծառության սուրբ և նվիրական գործին: Մենք հավատում ենք, որ գմբեթների վրա բարձրացված այս խաչերը պիտի հառնեն մեր հոգիներից ներս և պիտի մաքրեն մեր զգացումները, մեր մտածումները, սրտի և մտքի մեր խորհուրդները ու պիտի դարձնեն մեզ արժանի զավակներ մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի, և մեր Սուրբ Հայրերի»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ իր գնահատանքն ու օրհնությունը բերելով Մանուկյան գերդաստանին, շինարարներին և բոլոր այն անձանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այդ հոյակերտ տաճարի կառուցման գործում:

Արարողությանը ներկա էին Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանը, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի միաբաններ, ԱՄՆ Արևելյան թեմի թեմական խորհրդի անդամներ, բարերարներ և բազմաթիվ հավատացյալներ:

Եկեղեցու օծման արարողությունը նախատեսվում է կատարել 2005 թ. մայիսին: